ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1920 թ. նոյեմբեր—1921 թ. փետրվար)

Է. Ա. ՁՈՀՐԱԲՅԱՆ

Հայաստանում սովետական իշխանության հաստատման ժամանակ քեմալականների և դաշնակցականների միջև մղված պատերազմի հետևանքով Թուրքիան զավթել էր Հայաստանի տերիտորիայի զգալի մասը և փակել Ալեքսանդրապոլով անցնող միակ երկաթուղին։ Լոռին զավթել էին վրացական մենշևիկները, իսկ Զանգեզուրում տեր ու տնօրինություն էր անում «սպարապետ» Նժդեհը։ Իշխանության ղեկը իր ձեռքը վերցրած Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ներքին հրատապ հարցերին զուգընթաց պետք է մեծ ուշադրություն դարձներ արտաքին հարաբերությունների՝ մասնավորապես, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը։

Հայաստանի նորաստեղծ Հեղկոմն իր առաջին իսկ քաղաքական ակտում՝ Հայաստանը Սովետական Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին 1920 թ. նոյեմբերի 29-ի իր դեկլարացիայում հայտարարեց. «Հավատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրվող ժողովրդական Տաճկաստանը մեզ ևս իր հետ Սևրի դաշնագրի հակառակորդ համարելով, մեղ եղբայրական ձեռք է մեկնելու այժմ, երբ մենք տապալեցինք մեր թշնամուն և նրա հետ միասին կռիվ ենք մղում Անտանտի գիշատիչների դեմ։ Մենք համոզված ենք նաև, որ ոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»[1]։

Թուրքիայի նկատմամբ այսպիսի լավատեսական տրամադրությունները արդյունք էին տիրող այն կարծիքի, որ, իբր, քեմալականները Հայաստանում ագրեսիվ նպատակներ չեն հետապնդում, որ նրանք պայքարում են միայն Անտանտի հավատարիմ գործակալների՝ դաշնակների դեմ։ Բայց շուտով պարզվեց, որ «Արևելքը հեղափոխականացնող» «աշխատավորական Թուրքիան» բոլորովին էլ մտադիր չէ փոխել իր թշնամական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։

Եվ իրոք, դեկտեմբերի 2-ին, արդեն իշխանությունը կորցրած դաշնակների հետ, նրանք ստորագրեցին «դաշնակցության հավիտենական ամոթն ու խայտառակությունը»[2] հանդիսացող Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմա-

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 405։

2 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1929, էջ 445։

նադիրը»։ Իսկ նոր կոնֆերանս հրավիրելու և հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու վերաբերյալ Սովետական Հայաստանի Հեղկոմի պահանջը դիվանագիտորեն մերժելով՝ պատասխանեցին, թե «մոտ ապագայում կհրավիրվի կոնֆերանս, որտեղ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին քննության կառնվեն կովկասյան խնդիրներն ընդհանրապես»[4]։

Բայց նման պայմաններում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ամեն մի ձգձգում ոչ միայն շրջափակման շարունակում էր նշանակում, այլև բարոյական ուժեղ հարված էր հասցնում սովետական իշխանության հեղինակությանը Հայաստանում։ Ուստի, չհաշտվելով Թուրքիայի Հայաստանի համար կործանարար այդպիսի քաղաքականության հետ, ՀԿԿ Կենտկոմը և Հեղկոմը Սովետական Ռուսաստանի աջակցությամբ պայքար մղեցին Ալեքսանդրապոլի պայմանագրի վերացման և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նպատակով նոր կոնֆերանսի հրավիրման համար։

1920 թ. դեկտեմբերի 5-ին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը և Հայաստանում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Լեգրանը Թուրքիայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Մդիվանուն հեռագրում են. «Պնդեցեք Սովետական Ռուսաստանի միջնորդության ճանաչման անհրաժեշտության վրա, դաշնակցական պայմանագրի վերացման և Հեղկոմի պատվիրակության հետ նոր բանակցությունների անհրաժեշտության վրա...»[5]։ Իսկ դեկտեմբերի 10-ին արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը Անկարայի կառավարությանն ուղղած նոտայում հույս հայտնելով, որ «Թուրքիայի Ազգային մեծ ժողովը անկեղծ ուրախությամբ է ընդունել հեղափոխական հեղաշրջումն ու սովետական իշխանության հաստատումը Հայաստանում», և որ «այսուհետև բացառվում է Թուրքիայի և Հայաստանի միջև թշնամական ընդհարումների ամեն մի հնարավորություն» առաջարկեց չեղյալ համարել դաշնակների ստորագրած Ալեքսանդրապոլի ստորացուցիչ պայմանագիրը և «շուտով կոնֆերանս հրավիրել՝ Հայաստանում հեղափոխական հեղաշրջմամբ ստեղծված նոր պայմաններին համապատասխան համաձայնության գալու համար»[6]։

Ավելին՝ Թուրքիայի կառավարությունը պնդում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դրվեն Ալեքսանդրապոլի պայմանագրից բխող պայմանները։ Թուրքական կողմը արդարացի էր համարում Հայաստանի տերիտորիայի մոտ կեսի զավթումն իր կողմից, որի դեմ դեռևս ժամանակին բողոքել էր Սովետական Ռուսաստանի կառավարությունը[7]։ Քեմալականները, միաժամանակ ամեն կերպ ձգտում էին իրագործել զինադադարից և Ալեքսանդրապոլի պայմանագրից բխող պայմանները՝ շարունակելով թալանը և բռնությունները օկուպացված շրջաններում։ Օրինակ, 1920 թ. դեկտեմբերի

3 Դրանով Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից. Թուրքիային էր հանձնում Արևելյան Հայաստանի զգալի մասը (Ղարսի, Արդահանի, Սուրմալուի գավառները), Նախիջևանը ժամանակավորապես դրվում էր Թուրքիայի հովանավորության տակ։ Հայաստանը փաստորեն զրկվում էր նաև ելք պահելու իրավունքից։

4 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՖԱ). ֆ. 4033, ց. 1, գ. 981, փ. 10, թ. 1։

5 ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, փ. 10, թ. 1։

6 Документы Внешней политики СССР, т. 3, М., 1959, стр. 379.

7 Նույն տեղում, մաս I, էջ 490։

13-ին Թուրքիայի Արևելյան ռազմաճակատի հրամանատարությունը Հայաստանի Հեղկոմից պահանջում է Ուլուխանլու կայարանում կանգնած 40 վագոն դինամիտները շտապ կերպով փոխադրել Ալեքսանդրապոլ և հանձնել իրեն, ինչպես նաև թուրքական բանակի ներկայացուցիչներին Երևանի նահանգում մրցերքների գնումներ կատարելու թույլտվություն տալ։ Ալեքսանդրապոլի պայմանագրից բխող պայմանների կատարման վերաբերյալ մի վերջնագիր էլ Կարաբեքիր փաշան ներկայացրեց 1921 թ. փետրվարի 21-ին[8]։ Սակայն այդ վերջնագրերը չէին կարող անհրաժեշտ ազդեցություն գործել Սովետական Հայաստանի վրա, քանի որ նրա թիկունքում կանգնած էր Սովետական Ռուսաստանը։

Բայց ամենատարօրինակն այն է, որ ամպագորգոռ հայտարարություններ անելով այն մասին, որ Անտանտի դեմ մղվող պայքարում սովետական հանրապետությունները իր բնական դաշնակիցներն են, թուրքական կողմը, միաժամանակ, զարմանալի համառությամբ փորձում էր ուժի մեջ համարել նաև Ալեքսանդրապոլի դաշնագրի այնպիսի կետեր, ինչպիսիք են զինված ուժերի սահմանափակումը, վերահսկողության իրավունքը և այլն։

«Հայաստանի ՍՍՀ կառավարությանը միանգամայն անհասկանալի է նաև Թուրքիայի Ա(զգային) Մ(եծ) Ժ(ողովի) կառավարության ձգտումը՝ Սովետական Հայաստանի նկատմամբ պահպանելու Ալեքսանդրապոլի պայմանագրի պայմանները նրա այն մասում, որը վերաբերում է զինված ուժերի սահմանափակմանը,— գրում է Ալ. Բեկզադյանը Անկարայի կառավարությանն ուղղված 1921 թ. հունվարի 8-ի նոտայում։— Այդպիսի ձգտումը Հայաստանի ՍՍՀ կառավարությունը կարող կլիներ բացատրել միայն այն պայմանի առկայությամբ, եթե Թուրքիայի Ա(զգային) Մ(եծ) Ժ(ողովի) կառավարության սոցիալական ու քաղաքական խնդիրները չեն համապատասխանում նրա այն պնդումներին ու ընդհանուր խնդիրներին, որ հետապնդում են սովետական հանրապետություններն ու նրանց բնական դաշնակիցները համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղած իրենց պայքարում»[9]։ Այնուհետև ՀՍՍՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը անարդարացի է համարում Ալեքսանդրապոլի գավառում թուրքական զորքերի մնալը և համոզմունք հայտնում, որ «Անգորայի կառավարությունը չի մերժի անհապաղ կարգադրություն անել աղատելու և հայրենիք վերադարձնելու ռազմագերիներին...»[10]։

Սակայն քեմալականները ոչ միայն չեն համաձայնվում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար նոր կոնֆերանս հրավիրել, այլև հրաժարվում են Ալեքսանդրապոլի գավառը թուրքական զորքերից մաքրելուց, որը Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի անբաժանելի մաս էր ճանաչված։ Թուրքերը դա պատճառաբանում են նրանով, որ իբր թե Հայաստանում «սովետական իշխանությունը դեռևս բավականաչափ ամուր չէ», որ «կարմիր ուժերը քիչ են», իսկ «դաշնակ սպայությունը չի զինաթափված», և, հետևաբար, Վրաստանի հետ բարդությունների կամ թե Բաթումում Անտան-

---

8 Д. С. Заврнев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции. Тбилиси, 1947, стр. 98.

9 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 458։

10 Նույն տեղում, էջ 459։

տի կողմից դեսանտ ափ հանելու դեպքում հեշտությամբ կարելի կլինի կազմակերպել հայերի ելույթը թուրքերի դեմ[11]։

Թուրքական կառավարությունը գտնում էր, որ Սովետական Ռուսաստանի օժանդակությամբ Սովետական Հայաստանը կոնֆերանսում կարող է դնել ոչ միայն Ղարսի, այլև Արևմտյան Հայաստանի որոշ մարզերի վերադարձման հարցը, ուստի իրենց ձեռքում էին պահում Ալեքսանդրապոլը, բանակցությունների դեպքում գործարքի հնարավորություն ստանալու համար։ Այդ բանը հաստատում է նաև Մդիվանին Օրջոնիկիձեին ուղղած հեռագրում. «Թուրքերը դիտմամբ չեն հեռանա Ալեքսանդրապոլից, որպեսզի կոնֆերանսում առևտրի համար նյութ ունենան Վանին և Մուշին ի պատասխան»[12]։

Ալեքսանդրապոլը հնարավորին չափ երկար ժամանակ իրենց ձեռքում պահելու թուրքերի մյուս նպատակը թալանի ու կողոպուտի տենչն էր. թուրքական օկուպացիայի առաջին երկու ամիսների ընթացքում միայն Ալեքսանդրապոլի գավառից գերության է քշվել 14140, սպանվել՝ 4845 մարդ և այլն։ Իսկ թալանված հացահատիկի և ալյուրի քանակն անցնում է մեկ ու կես միլիոն փթից[13]։

Ժամանակավորապես գրավված շրջաններում թուրքական զորքերի կատարած գաղանությունների կապակցությամբ Սովետական Հայաստանի կառավարությունը բազմիցս բողոքեց Ազգային մեծ ժողովի կառավարությանը, բայց վերջինս ոչ միայն անհետևանք թողեց Հայաստանի կառավարության արդարացի բողոքները ու պահանջները, այլև նույնիսկ փորձեց նրան մեղադրել ինչ-ինչ դիտավորությունների մեջ։ Այդ առումով հատկանշական է Ալ. Բեկզադյանին (պատճեն՝ Չիչերինին) ուղղված քեմալական կառավարության հետևյալ պատասխանը. «Ի պատասխան հունվարի 8-ի և 21-ի 1921 թվականի Ձեր նոտաներին պատիվ ունեմ հաղորդել Ձեզ հետևյալը.

Այդ երկու փաստաթղթերից բխող ընդհանուր գաղափարը Հայաստանի Սովետական կառավարության բուռն ցանկությունն է նախ ձեռք բերել վերջին դաշնագրով իրեն հասանելիք Ալեքսանդրապոլի և մյուս մասերի էվակուացիան և հետո խնդրո առարկա դարձնել բուն այդ դաշնագիրը և իրեն անհաճո թվացող նրա պայմանները։ Այդ նպատակին հասնելու համար զործածված տակտիկան հետևյալն է.

ա. Վիճելի համարել Ալեքսանդրապոլի դաշնագրի օրինականությունը՝ ելնելով այն հակաճշմարտության վրա, որ իբր թե այդ դաշնագիրը բռնաբարում է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները։

բ. Կոչ անել Թուրքիայի հանդեպ Սովետական Ռուսաստանի ունեցած բարեկամական զգացումներին։

գ. Կրկնել մեր դեմ դաշնակցական զրպարտությունները, մեր մասին ռուս աշխատավոր ժողովուրդը սխալեցնելով սառնություն առաջացնել երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ, որոնց միությունը այժմ այնքան անհրաժեշտ է բոլոր ճնշվածների ազատագրության համար։

---

11 Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (այսուհետև ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 85, ց. 14, գ. 50, թ. 19)։

12 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 17, գ. 106, թ. 1—2։

13 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 4/114, ց. 2, գ. 43, թ. 4։

դ. Դիտմամբ ընդհարումներ առաջացնել նախ թուրք զինվորների և հայ բանդաների միջև, և ապա երկու երկրների կանոնավոր բանակների միջև այն հաշվով, որ կարելի կլինի քաշել, հակառակ իրենց կամքին, Ռուսիան և Թուրքիան արյունոտ ավանտյուրայի մեջ, որը... իմպերիալիստների առջև բաց կանի ընդմիշտ ողջ աշխարհը։

Ե. Այս նպատակին հասնելու համար ռուս-թուրք. հարաբերությունները խանգարել, կողոպտել և ձերբակալել դիվանագիտական կուրյերները, արգելել հեռագիրներ տալ և այլն, և այլն, և այս բոլորը մի այնպիսի ժամանակ, երբ Արևելյան դիվանատներում եռուն գործունեություն է տիրում Արևելյան գործերի վերաբերյալ, որը մեր և մեր բնական դաշնակիցների միջև շարունակական թղթակցությունը անհրաժեշտ է դարձնում»[14]։ Այս փաստաթուղթ թուրքական դիվանագիտության ժամանակի ամենացայտուն արտահայտությունն է։ Զգտելով խուսափել պատասխանատվությունից և մեղքը բարդել Սովետական Հայաստանի կառավարության վրա, թուրքական կողմն ամենաանշան դեպքերն անգամ ուռճացնելով աղմկում էր հայ կոմունիստների անբարյացկամության մասին։ Այսպես օրինակ, վերոհիշյալ նոտայում թուրքերը նշում են, թե իբր հայերը անօրինական կարգով ձերբակալել են Թիֆլիս ուղևորվող թուրքական դիվանագիտական սուրհանդակներին, մինչդեռ Սովետական Հայաստանի պետական անվտանգության օրգանները նրանց ձերբակալել էին համապատասխան փաստաթղթեր չունենալու պատճառով։ Բայց ամենազարմանալին այն է, որ այսպիսի անհիմն մեղադրանքները Անկարայի կառավարությունը ներկայացնում էր սպառնալիքներով հանդերձ՝ «Այս պայմաններում, խնդրում եմ պարոն կոմիսար հավատալ, որ թուրք ժողովրդի ողջ համբերությունը և չափավորությունը, ինչպես նաև հայկական ռեժիմի [նկատմամբ] մեր ունեցած բարեկամությունը հարկավոր կլինեն, որպեսզի մենք կարող լինենք պահել մեր սառնարյունությունը... ուզում եմ մի անգամ ևս Ձեզ հայտնել իմ կառավարության տեսակետը Ձեր հարուցած խնդիրների վերաբերյալ։ Մենք Ալեքսպոլի դաշնագիրը համարում ենք ոչ թե բռնության գործ, այլ արդարության և հավատում ենք, որ նրա կիրառումը անհրաժեշտ է Կովկասում տևական մի խաղաղություն հաստատելու համար»[15]։

Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու և հայ-թուրքական կոնֆլիկտին դրական լուծում տալու ուղղությամբ, մեծ աշխատանք է կատարում Սովետական Ռուսաստանը։ Դեռ 1920 թ. դեկտեմբերի 3-ին Գ. Վ. Չիչերինը ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյին է ներկայացնում հայ-թուրքական կոնֆլիկտի լուծման վերաբերյալ իր առաջարկները, իսկ 4-ին՝ Օրջոնիկիձեին հեռագրում է. «Հայաստանի սովետականացումը բոլորովին փոխում է իրադրությունը։ Արդյոք հասկանո՞ւմ են այդ թուրքերը։ Ինչպիսի՞ն են այժմ նրանց պայմանները։ Պետք է պնդել մեր մասնակցությամբ խառը հանձնաժողովի վրա»[16]։ Սակայն, թուրքական կողմը, ինչպես տեսանք, համառորեն չցանկացավ ընդառաջել Սովետական Հայաստանին, որը Բ. Վ. Լեդրանի միջոցով ստիպված եղավ նորից դիմել ՌՍՖՍՀ-ի միջամտությանը. «Սովետական Հայաստանի կառավարության հետ խաղաղ բանակցությունների մեջ մտնելուց

---

14 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 11, թ. 16։

15 Նույն տեղում

16 Մլի ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 49, թ. 3։

Կարաբեքիրի համառորեն խուսափելու, ինչպես նաև նրա այն հայտարարության կապակցությամբ, որ հայկական հարցը կլուծվի Մոսկվայի՝ ռուս-թուրքական կոնֆերանսում հայ կոմունիստների մինիմալ մասնակցությամբ, անհրաժեշտ է Ձեր հեղինակավոր դիմումը Անգորայի կառավարությանը Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ անմիջապես հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու համար»[17]։

Բայց այդ ուղղությամբ ձեռնարկված փորձերն էլ անարդյունք անցան, և Սովետական Ռուսաստանի կառավարությունն ի վերջո համաձայնվելով հայ-թուրքական հարաբերությունները Մոսկվայի կոնֆերանսում կարգավորելու մտքի հետ և ձգտելով արագացնել նրա հրավիրումը, Անկարայի կառավարությանն ուղղված նոտայում գրում է. «Սովետական կառավարությունը հրաման է արձակել թուրքական կառավարության պատվիրակներին շտապ և անարգել կերպով Մոսկվա փոխադրելու մասին։ Միաժամանակ Սովետական կառավարությունը հրավեր է ուղարկում Ադրբեջանական և Հայկական Սովետական կառավարություններին»[18]։

Թվում էր, թե Մոսկվայի կոնֆերանսի շուրջը ձեռք բերված համաձայնության շնորհիվ բոլոր դժվարություններն արդեն հաղթահարված էին և այլևս ոչինչ չէր կարող խանգարել հայ կոմունիստների անմիջական մասնակցությամբ, հայ-թուրքական հարաբերությունների վերջնական կարգավորմանը։ Ուստի, պատրաստվելով մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին, Հայաստանի Հեղկոմը և ՀԿԿ Կենտկոմը 1920 թ. դեկտեմբերի 26-ի նիստում քննում են այդ հարցը և որոշում պատվիրակության կազմը[19]։ Միաժամանակ, պատվիրակության համար մանրամասն դիրեկտիվներ են մշակում։

Սակայն Սովետական Հայաստանի պատվիրակությանը վիճակված չէր մասնակցել կոնֆերանսին։ Մոսկվա ժամանած քեմալական պատվիրակությունը հրաժարվեց հայ պատվիրակների հետ կլոր սեղանի շուրջ բանակցելուց։ Մարտի 12-ի նիստի արձանագրությունները ցույց են տալիս, որ թուրքերը իրենց այդ վարքագիծը բացատրել են հայ պատվիրակների հետ բանակցություններ վարելու «լիազորությունների բացակայությամբ»[20], որը միմիայն պատրվակ էր։ Այսպիսով, Անկարայի կառավարությունը մի անգամ ևս խախտեց իր իսկ տված համաձայնությունը և հայ պատվիրակների անմիջական մասնակցությամբ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը նորից հետաձգեց անորոշ ժամանակով։

Մինչև այժմ մեր պատմագրության մեջ Մոսկվայի կոնֆերանսում հայ պատվիրակության մասնակցության ձախողումը բացատրվել է դաշնակցության փետրվարյան արկածախնդրությամբ միայն և չի բացահայտվել այդ հարցում թուրքական պատվիրակության խաղացած սև դերը[21]։ Ինչ խոսք, որ փետրվարյան արկածախնդրությունը բացասական դեր խաղաց. այն ՌՍՖՍՀ

---

17 Նույն տեղում, դ. 50, թ. 4։

18 Документы Внешней политики СССР, т. 3, стр. 372.

19 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 2, դ. 17, թ. 19։

20 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 2, դ. 63, թ. 34։

21 Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1970, էջ 141, Ս. Տ. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի տղատարման գործում, Երևան, 1966, էջ 251, Л. Н. Хейфец, Советская дипломатия и народы Востока 1921—1927 гг., М., 1968, стр. 93 և այլն։

կառավարությանը զրկեց Սովետական Հայաստանի պատվիրակության մասնակցությունը ապահովելու հնարավորությունից։ Դա հաստատում է նաև պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը՝ Ադրբեջանում ՀՍՍՀ լիազոր Մ. Աթաբեկյանին ուղղված նամակում. «Իմ այստեղ (Մոսկվա— Է. Զ.) ժամանելը համընկավ Երևանի հեղաշրջման հետ։ Այդ հանգամանքը որոշ անհարմարություն ստեղծեց Հայաստանի պատվիրակների համար, որոնք, կարծես թե ներկայացնում են արդեն տապալված կառավարություն։ Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ դաշնակները հատուկ ռադիոյով հայտնել են աշխարհին, որ ես Հայաստանի կառավարության անունից հանդես գալու իրավունք չունեմ...»[22]։ Այնուհետև Ա. Բեկզադյանը ավելացնում է. «Ահա ինչու Չիչերինին հարկ եղավ մոմենտի անհարմարության պատճառով, (Վրացյանի ավանտյուրան, Թուրքերի հայտարարությունը, ոչ պաշտոնական, մեզ հետ խոսել չցանկանալու մասին և այլն) առայժմ կոնֆերանսը հայտարարել ռուս-թուրքական, որի մասին, ըստ երևույթին, դուք արդեն կարդացել եք թերթերում...»[23]։

Ինչպես տեսնում ենք, Վրացյանի ռադիոգիրը պատվիրակությանը զրկում էր Հայաստանի կառավարության անունից հանդես գալու իրավունքից և Թուրք պատվիրակները կարող էին հենց այդ հանգամանքն էլ օգտագործել։ Բայց որպես «ռեալ քաղաքագետներ», նրանք շատ լավ էին հասկանում, որ այդ դեպքում իրենց ձեռքերը կաշկանդած կլինեն և դաշնակցական արկածախնդրության արագ վերացման դեպքում այլևս միացյալ կոնֆերանսից խուսափելու հնարավորություն չեն ունենա։ Մինչդեռ «լիազորությունների բացակայությամբ» պատճառաբանությունը նրանց ապահովում էր ամեն մի անակնկալից, և դրանով իսկ իրենց քաղաքական գծի իրագործման հեռանկար տալիս, մի գիծ, որը որդեգրել էին կոնֆերանսի նախօրյակին, և որի բացահայտումը լույս է սփռում Մոսկվայի կոնֆերանսում, ինչպես և նրանից հետո Թուրք քաղաքագետների վարքագծի վրա։

Իրականում, Մոսկվայի կոնֆերանսի նախօրյակին քեմալական Թուրքիան Անդրկովկասի սովետական հանրապետությունների նկատմամբ իր նրվաճողական պլանների իրագործման համար սեպարատ քաղաքականություն էր որդեգրել, մինչդեռ սովետական հանրապետությունների հետ միացյալ կոնֆերանսը այդ տեսակետից Թուրքիային ոչ մի լավ բան չէր խոստանում։ Այդ պատճառով էլ Անկարայի կառավարությունն սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել միացյալ կոնֆերանսի դումարումը ձախողելու նպատակով։

Եվ ահա, քեմալականները շարունակելով իրենց նախորդների քաղաքականությունը, գնացին տրորված ճանապարհով. Մոսկվա ուղևորվող պատվիրակները ևս փորձեցին այդ նպատակի համար օգտագործել Ադրբեջանը և Բաքվում սեպարատ բանակցություններ սկսելու փորձ կատարեցին, մոռանալով, որ Անդրկովկասը, այդ թվում և Ադրբեջանը նախկինը չէր։ Քեմալականների հետ ինչպես այս, այնպես էլ հետագա բոլոր բանակցությունների ժամանակ Սովետական Ադրբեջանի կոմունիստները սրբությամբ կատարեցին

---

22 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 69, թ. 25։

23 Նույն տեղում, թ. 26։

իրենց ինտերնացիոնալ պարտքը հայ և վրաց աշխատավորների նկատմամբ և հրաժարվեցին սեպարատ բանակցություններից[24]։

Մոսկվա ուղևորվող թուրքական պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ բեյը, հետագայում Անկարայում Սովետական Ադրբեջանի լիազորներկայացուցիչ Արիլովի հետ ունեցած զրույցի ժամանակ անդրադառնալով այդ հարցին, ասել է. «ՌՍՖՍՀ-ի հետ պայմանագիր կնքելու նպատակով ուղևորվելով Մոսկվա, մենք մտադիր էինք պայմանագրեր կնքել Ադրբեջանի և այնուհետև Վրաստանի և Հայաստանի հետ։ Բայց Ադրբեջանում, դժբախտաբար, այդ հարցին այնպես չվերաբերվեցին, ինչպես որ սպասում էինք...»[25]։

Պարզվում է, որ Սովետական Հայաստանի պատվիրակության հետ բանակցություններ վարելու լիազորություն չունենալը շինծու պատճառաբանություն էր։ Չէ՞ որ ինքը՝ Յուսուֆ Քեմալն է վկայում, որ ուղևորվելով Մոսկվա մտադիր էին պայմանագրեր կնքել նախ «Ադրբեջանի և այնուհետև Վրաստանի և Հայաստանի հետ»։ Հետևաբար, պատվիրակությունը Հայաստանի հետ պայմանագիր կնքելու հարցում իր լիազորությունների մեջ չէր սահմանափակված. և հայ պատվիրակների հետ բանակցություններից հրաժարվելու պատճառը ոչ թե «լիազորությունների բացակայությունն» էր, այլ սեպարատ պայմանագիր կնքելու ցանկությունը։ Այդ բանն ապացուցվեց նաև հետագայում, երբ, չնայած Մոսկվայում ձեռք բերված համաձայնությանը, տունդարձի ճանապարհին թուրքական պատվիրակները Թիֆլիսում նորից հրաժարվեցին միացյալ կոնֆերանսից, և Ադրբեջանի հետ առանձին բանակցություններ սկսելու փորձ կատարեցին։ Սեպարատ պայմանագրերի գաղափարը նրանք առաջ քաշեցին նաև Ղարսի կոնֆերանսում (1921 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր), բայց հանդիպելով Անդրկովկասյան հանրապետությունների միահամուռ դիմադրությանը, ի վերջո, ստիպված եղան տեղի տալ և համաձայնվել միացյալ կոնֆերանսի գումարմամբ և կոլեկտիվ պայմանագրի կնքմամբ։

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ
(ноябрь 1920 г.— февраль 1921 г.)

Э. А. ЗОГРАБЯН

Резюме

В момент установления советской власти в Армении, армяно-турецкие отношения находились в предельно напряженном состоянии, турецкая армия оккупировала значительную часть территории страны.

Армянские коммунисты приложили максимум усилий для достижения справедливого разрешения армяно-турецкого конфликта. Одновременно, автор статьи разоблачает двуличную и враждебную по отношению к армянскому народу политику турецкого правительства, которое стремилось путем сепаратных переговоров навязать армянскому народу кабальные условия Александропольского договора.

---

[24] Սովետական Ադրբեջանի հետ սեպարատ պայմանագիր կնքելու մի փորձ էլ արել էր Բեքիր Սամի բեյը 1920 թ. նոյեմբերին Մոսկվայից վերադարձի ճանապարհին։

[25] ЦГА ОРСС Аз. ССР, ф. 6с/28 р. оп. 1, е/х 86, л. 17.